Արձանագրություն N 2

Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի ապրանքանիշի ձևավորման (բրենդինգ) խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2025/53» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Սամվել Խարազյան
Հանձնաժողովի անդամներ	Էլլա Նահապետյան, Գայանե Բալայան
Հանձնաժողովի քարտուղար	Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ս. Խարազյան)

Ընդունել ի գիտություն, որ 19.08.2025թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի օգոստոսի 27, ժամը 17:30-ն:

2025 թվականի օգոստոսի 27-ին ժամը 17:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7/1, 095 95 96 96 info@dominoproduction.am	02249552

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ս. Խարազյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

(Ս. Խարազյան)

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որի մասին 15.09.2025թ մասնակիցը ծանուցվել է հետևյալ բովանդակությամբ.

➢ *Հարգելի մասնակից, հայտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ (Դիմում հայտարարության մեջ իրական շահառուների վերաբերյալ հողումը վավեր չէ, ինչպես նաև ներկայացված չեն ապրանքանշաններ և բրենդային կոնցեպտներ, որոնք իրականացվել են կազմակերպության կողմից, և անձանց անունները, ովքեր*

իրականացրել են ապրանքանշանները), որոնք ենթակա են շրկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շրկել արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացնել շրկված Հավելված 1-ը, ինչպես նաև

- Ապրանքանշաններ և բրենդային կոնցեպտներ՝ ներառյալ ապրանքանշանը, որոնք իրականացվել են կազմակերպության կողմից,

- Ներկայացնել անձանց անունները, ովքեր իրականացրել են ապրանքանշանները:

Շրկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ armine.galustyan@moh.am, էլեկտրոնային հասցեին մինչև 16.09.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1702):

15.09.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակցին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն՝

Մասնակիցը սահմանված ժամկետում՝ 16.09.2025թ. շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ս. Խարազյան)

Ստորև ներկայացվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները
Գնման գին չի սահմանվել. Գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա

Հ/հ	*գնման առարկայի անվանումը*	*մասնակիցների անվանումը*	*մասնակիցների գնային առաջարկները*		
			առանց ԱԱՀ	*ԱԱՀ*	*ընդհանուր*
1	*Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի ապրանքանիշի ձևավորման (բրենդինգ) ծառայություններ*	*«Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ*	*27 300 000*	*5 460 000*	*32 760 000*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ս. Խարազյան)

19.09.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ընտրված մասնակից ճանաչել «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ս. Խարազյան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԽԾՁԲ-2025/53» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չի սահմանվում:

Պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ին՝ 32 760 000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ս. Խարազյան*

անդամներ՝ _____ *Է. Նահապետյան*

_____ *Գ. Բալայան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*